

ԲԱՔՎԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՐԱՀԱՄ ՇՈՒՆՅԱՆ

Բաքվի քաղաքային թանգարանում, ի թիվս ճարտարապետական այլ հուշարձանների, ցուցադրված են նաև հանրապետության տարբեր շրջաններից բերված IX—XVII դդ. հայկական շորս խաչքարեր և հայերեն արձանագրություններ մի քանի բեկորներ: Արձանագրություններից առաջինը փորագրված է փոքրիկ, տափակ տապանաքարի վրա (թանգարանային համարը՝ 138), որի ստորին ձախ անկյունը կտորված է և դրա հետևանքով արձանագրության թվականության հարյուրավորն ու տասնավորը չեն պահպանվել (նկ. 1): Արձանագրությունը հետևյալն է.

Ա(ստուա)ծ ողորմի խորշային<sup>1</sup>  
Թվին Ռկ<sup>1</sup>Ը:

Ելնելով տապանաքարի ձևից, արձանագրության տառերի գրչությունից, խաչքանդակից և խորշային-խորշահանվան գործածության փաստից<sup>1</sup> այն կարելի է թվագրել XV—XVI դդ.:

Երկրորդ արձանագրությունը հայերեն և պարսկերեն հիշատակարան է (նկ. 2): Տապանաքարը կտորված է երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին թանգարանային համար (125 և 154):

Արձանագրությունը հետևյալն է.

Յիշատակ շինեցի մատու-  
ոս Ղարապաղէցի Բաքու բն-  
ակեալ խաշատուր Մ<sup>1</sup>ահակետանովս (") յ829.

Թանգարանի երրորդ արձանագրությունը երկիցս հրատարակել է վիմագրագետ Ս. Բարխուդարյանը, բայց այն թերի է և որոշ լրացման կարիք ունի: Արձանագրությունը փորագրված է կրաքարից կերտված, երկթեք տապանաքարի վրա, որը կտորվելով բաժանվել է երկու մասի (երկարությունը 1,80 մ, լայնությունը՝ 0,45 մ, բարձրությունը՝ 0,35 մ): Տապանաքարը իրավացիորեն վերագրվում է IX դ. Աղվանից թագավորության հիմնադիր Համամ իշխանին: Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ գերեզմանաքարի տակ թաղված է եղել 854—855 թթ. Համամի ձեռքով սպանված նրա եղբայրը<sup>2</sup>:

Հողմնահարվելու և կտորվելու հետևանքով խիստ տուժել են արձանագրության հատկապես առաջին երկու տողերը, որի պատճառով այն տեղ-տեղ անհասկանալի է: Արձանագրության առաջին տողում Ս. Բարխուդարյանի վե-

<sup>1</sup> Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1967, էջ 191, որտեղ խորշահանունը հիշատակված է 1499 թ.:

<sup>2</sup> Ս. Գ. Բարխուդարյան, Տապանաքար Համամ իշխանի անունով (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 1, էջ 63), ն ու ն ի՝ Արցախի, Շաքիի և Փառխոսի իշխանությունները IX—X դդ. («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 66): Տապանաքարը Բաքու է բերվել Ադրամի շրջանի Սոֆուլու գյուղից (պատմական Տիգրանակերտ ավանից):

րականգնած «դիր»-ը հանդիպում է V—VII դդ. տապանաքարերի վրա «գերեզման» իմաստով, որը և միանգամայն ընդունելի է<sup>3</sup>, Սակայն նույն տողում «դիր»-ից հետո հեզինակի վերականգնած դամբանի... եղբար» հատվածը համոզիչ չէ, քանի որ «դիր դամբանի» նույնիմաստ բառեր են և V—IX դդ. հազիվ թե միատեղ գրվելին: Չի համոզում նաև դրանից հետո եկող «եղբար» վերականգնումը: Արձանագրության այդ հատվածում նկատվում է «դիս», կամ «դին» վերջավորությամբ ինչ որ բառի վերջի մասնիկը: Հետևաբար, այստեղ «եղբար» վերականգնումը ընդունելի չէ: Առաջարկում ենք այդ բառը վերընթերցել «որդին-որդիս» ձևով:



Նկ. 1. XV—XVI դդ. տապանաքար:

Արձանագրության երկրորդ տողի երկրորդ անձնանունը Ս. Բարխուդարյանը վերծանել է «Սնպատա», մենք վերընթերցում ենք «Պետրոսա»՝ Պ և Ն տառերի փակագրով, որպիսին պարզ երևում է լուսանկարում (նկ. 3):

Այնուհետև արձանագրության երկրորդ տողի շարունակությունում դժվարությամբ ընթերցվում է «Թո-ին»՝ ակնբերաբար «Թոռին» և ապա՝ «Դաւթա ցաւաւք վիրաւոր»<sup>4</sup> (նկ. 4):

<sup>3</sup> «Տեղեկագիր», № 1, էջ 64, նակ՝ 2. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արձատական բառարան, Երևան, 1971, Գ. 1, էջ 675, «Արցախի, Շաբիի, Փառխոսի իշխանությունները IX—X դդ.», հոդվածում (էջ 66) արձանագրության առաջին տողի սկիզբը վերծանված է «Այս դիր դամպանի... կա...»:

<sup>4</sup> «Դաւթա» ընթերցումը թեական է:

Արձանագրության հերթորդ տողում գրված է. «Ի ճորտ հասակե ելա յաշխարհէս»: Ս. Բարխուդարյանը մնացյալ հատվածը վերծանում է՝ «դառն թողի սուգ զգրիս զայս»<sup>5</sup>, Այս ընթերցումը վերանայելի է, քանզի «սուգ» բառի փոխարենն ճիշտ կլինի կարդալ «նուք» կամ «ոք», իսկ դրանից առաջ՝ «թեռ»: Հե-



Նկ. 2. Մատուռի մուտքի քարը:

տևաբար, այստեղ խոսքը «ընթեռնուք» բառի մասին է, ուստի և այդ հատվածը վերծանում ենք «եւ ոք ընթեռնուք զգիրս զայս»: Չորրորդ տողի «ամերձենա» բառի վերջում Ս. Բարխուդարյանը ավելացրել է «լ», իսկ «ի սա»-ն կարդացել է «ի սմա»:



Նկ. 3. IX դ. տապանագիր:

Արձանագրության խաթարված մասերը վերականգնելուց հետո այն հետևյալ տեսքն ունի.

մեր վերծանությամբ

1. Այս դիր-----պան-կա-հ---  
դին ՂՂամամ իշխանի
2. Եւ տն Փղիպեի եւ տն  
Պետրոսա, թողին Դաւթա լ, ցա-  
լաւք վիրաւոր եւ զրկ-


Ս. Բարխուդարյանի վերծանությամբ

- Այս դիր դամբանի-----եղբար  
ՀՂամամ իշխանի  
Եւ տն Փղիպէի եւ տն  
Սնպատա-----  
----- զրկ -


<sup>5</sup> «Տեղեկագիր», № 1, էջ 62:




Գրիգոր Ատրնեբրսեհյանի «Սյունյաց և Աղվանից իշխան» տիտղոսը բուրրովին էլ ինքնանպատակ չէր: Նրա տիրույթները գտնվում էին Սոթք, Սարգավառներում և Թարթառ գետի հովտում, որտեղ նա ամրացնելով իր իշխանությունը՝ կառուցում է Հավախաղացի բերդը<sup>8</sup>: Հետևաբար, հնարավոր ենք համարում, որ IX դ. 80—90-ական թթ. հիշատակվող Համամ իշխանը նույն Գրիգոր Ատրնեբրսեհյան Սյունյաց և Աղվանից իշխանն է: Եվ բուրրովին էլ պատահական չէ, որ Համամ իշխանին վերագրվող վերոհիշյալ տապանաքարը գտնվել է Թարթառ գետի հովտում, պատմական Տիգրանակերտ ավանի սվերակներում:



ա



բ



գ

Նկ. 6. Հայ վարպետների անունների փակագրեր:

Հաջորդ հայերեն արձանագրությունը փորագրված է Շիրվանշահերի պալատական համալիրի պատերին: Հուշարձանախմբի «Դիվան խանե» կոչվող աշխարհիկ կառույցի (XV դ.) հարավային քանդակազարդ մուտքի ճակատին և նրա արևելյան պատին, խորշի շքաքարերի (ստալակտիտ) վրա, շրջանակների մեջ պահպանվել են հուշարձանը կառուցող հայ վարպետների փակագիր անունները (նկ. 5): Դիվան խանեի հարավային մուտքի ճակատին մի սրբատաշ քարի վրա փորագրված է «վարպետ Ե. Գ.» (նկ. 6 բ):

Քիչ ներքև մեկ այլ հայ վարպետի անվան սկզբնատառերն են (նկ. 6 գ): Առաջին վարպետի անունը կրկնվում է նույն շենքի վերոհիշյալ խորշի վրա՝ ուղղանկյան կանոնավոր շրջանակի մեջ (նկ. 6 ա):

Նմանօրինակ ստորագրությամբ հայ վարպետների հիշատակարանների հանդիպում ենք նաև Հայաստանում (Սանահին, Ցաղղան և այլն): Դիվան խանեի մուտքերից մեկի հատակին փորագրված է հայերեն օ: Նույն հուշարձանի սլաբսպապատի մեջ ևս պահպանվել է XV—XVI դդ. հայերեն արձանագրության մնացորդով սրբատաշ մի քար, որի վրա փորագրված է երկաթագիր Յն:

Այսպիսով Շիրվանշահերի պալատի հայերեն արձանագիր քարերի առկայությունը վկայում է, որ հիշյալ պալատի կառուցմանը մասնակցել են նաև հայ վարպետներ:

<sup>8</sup> Մ ո վ ս ե ս կ ա դ ա ն կ ա տ վ ա ց ի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 266—267:

## АРМЯНСКИЕ НАДПИСИ, ХРАНЯЩИЕСЯ В БАКИНСКОМ ГОРОДСКОМ МУЗЕЕ

АБРААМ ШАГИНЯН

### Резюме

В Бакинском городском музее хранятся четыре армянских хачкара и фрагменты надгробных камней с надписями, привезенные из разных районов республики. Большинство надписей, приводимых нами, издается впервые. Наиболее интересными представляются: надгробная надпись, в которой упоминается имя князя Амама (XI в.), и надписи армянских мастеров-строителей Ширваншахского дворца на здании Диванхане и крепостных стенах, относящихся к XV—XVI вв.